



ՂԵՎՈՆԴ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԻՄ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՄԻՔԱՑԵԼ ՆԱԼԱՆԴՅԱՆԻ ՀԵՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ*



ազար ուժ հարյուր հիսունուժ
թվականի ամառն էր: Ես պաշ-
տոնական գործով փոստային
սալակով Երևան էի վերադառ-
նում: Երբ հասա Դավալու հա-

յաբանակ գյուղը, սկսվեց մեղմ անձրև: Հա-
մարտից կավային հողը այնքան թանձրա-
փուն ու մածուցիկ դարձավ, որ խեղճ ձիերը
դժվարությամբ էին քաշում սալերը: Մտա-
ծեցի, թե այս դրությամբ դժվար կլինե՞ր ձի-
երին բարձրացնել Կոնդի՝ զառիվերը, ուստի
և բարվոք համարեցի իջնել կայարանում,
իսկ այստեղից կառքով գնալ մեր տունը:
Այդ նպատակով սալակը քշել տվի քաղա-
քից դուրս գտնված կայարանի բակը:

Մինչ այս, մինչ այն, տեսա, որ կայա-
րանի վերակացուն, մի ճանապարհորդական
«պողորոժնի»² ձեռքին բռնած, գնում է կա-
յարանի սենյակներից մեկը: Հետաքրքրվե-
ցի իմանալ՝ թե ո՞վ է ճանապարհորդը: Կար-
դում եմ՝ «Միքայել Նալբանդյան»: Աչքերիս
չեմ հավատում, որ «Հյուսիսափայլ»ի աշ-
խատակցին, «Ազատն Աստված»ի հեղինա-
կին, հանկարծ անսպասելի կերպով կտես-
նեմ Երևանում: Վերակացուին հարցնում եմ՝
թե այդ պարոնը որտեղի՞ց է եկել և ո՞ւր է
գնում: Նա պատասխանում է, որ փոքր ինչ
առաջ եկել է էջմիածնից և գնում է Տփլիս:
Խնդրեցի, թե հայտնե՞ք պարոն Նալբանդ-
յանին, որ մի երիտասարդ ցանկանում է ձեզ
տեսնել:

* Սույն հատվածը, բաղված Ղևոնդ ավագ քահանա
Աթանասյանի հիշողությունների տեղից, խմբագրու-
թյան արամազրեկ է հանգուցյալի որդին՝ Պ. Աթա-
նասյանը:— ԽՄԲ.:

1. Երևան քաղաքի բարձրագույն թաղամասը:

2. Փոստային բաց հրամանագիր, որը իրավունք է
տալիս ճանապարհորդին՝ փոստային կայարանից ձի
պահանջել ճանապարհորդության միջոցին:

— Շատ բարի,— ասաց վերակացուն և
գլուխը խոնարհեցնելով ներս մտավ «պողո-
րոժնի» տալու Նալբանդյանին:

Ես Ֆյոդորովին (այսպես էր վերակացուի
ազգանունը) չէի ասել իմ անուն-ազգանու-
նը, բայց նա ծանոթ լինելով ինձ հետ, ար-
դեն ասել էր և երբ թույլտվություն ստացա
ներս մտնելու և հասել էի տան դռանը, Նալ-
բանդյանն ինքը ձայն տվեց ներսից:

— Շնորհ արե՛ք, ներս մտե՛ք, պարոն Ա-
թանասյան:

Ես ներս մտա և խորին հարգանքով ու
ակնածությամբ բռնեցի նրա շնորհալի ձեռքը
և զարմանքս հայտնեցի, թե նա որտեղից
գիտի իմ ազգանունը: Նա, քաղցր ժպիտն և-
րեսին, ասաց.

— Դուք «Հյուսիսափայլ»ի բաժանորդ եք,
և պարոն Նալբանդյանը մտադիր էր արդեն
ցանկը կազմել և բաժանորդների անուն և
ազգանունը հրատարակել ամսագրի մեջ, և
երբ պարոն վերակացուն ձեր անունը տվեց,
ես վերհիշեցի այդ:

Խոսակցության մեջ հայտնվեց, որ Նոր-
Նախիջևանի դպրոցական ֆոնդի համար
հնդկահայ վաճառականներից կտակներով
բավականին խոշոր գումարներ են ֆլիդել
և այդ մասին հարկավոր էր թե՛ Վեհափառ
Կաթողիկոսի և թե՛ էջմիածնի Սինդոգի վա-
վերացումը՝ իր հավատարմության մասին:

— Այս ամենը ի կատար ածելով,— ավե-
լացրեց Նալբանդյանը,— այժմ գնում եմ
տեսնեմ Տփլիսում փոխարքայի դիվանա-
կան կառավարչին և նույնպես վավերացու-
մով իմ հավատարմությունը պաշտոնապես
հաստատել տալով, անցնել Պետերբուրգ, իսկ
այնուհետև Լոնդոն, ուր հեշտ կլինի անգլիա-
կան նավով Հնդկաստան գնալ և այդ գո-
մարների մասին բանակցություններ սկսել
Կաթիկոսի և անգլիական փոխարքայի հետ
և նրա միջոցով ստանալ մեր դպրոցապատ-
կան գումարները:

— Պարոն Նալբանդյան, դուք մեծ պատականություն եք վերցրել ձեզ վրա, — պատասխանեցի ես և շարունակեցի. — այդ այդպես էլ թող լինի, բայց ես խնդրում եմ, որ ձեր գնալը մի քանի ժամով ուշացնեք. ես բնիկ երեանցի եմ, ունեմ լավ ընկերներ, որոնք ի սրտե կցանկանային տեսնել ձեզ, խոսել ձեզ հետ, մի կտոր աղ ու հաց ճաշակել: Ապա թե ո՛չ, իմ այդ ընկերները, որ իմանան, թե դուք եկել եք Երևան, պատահել եք ինձ և ես չեմ փորձել պահել ձեզ, ինձ կբարկոծեն:

— Հայտնեցե՛ք ձեր ընկերներին իմ շնորհակալությունը և գոհունակությունը, պարոն Աթանասյան, դեպի ինձ ունեցած այդքան սիրո և հարգանքի համար. բայց անկարող եմ ո՛չ միայն մեկ քանի, այլև մեկ ժամ անգամ հետ մնալ ճանապարհից:

Այս ասելով Նալբանդյանը հանեց ճամբրուկից իր «Օշական» բանաստեղծությունից

մի օրինակը, մատիտով արձանագրեց վրան, տվեց ինձ և ասաց.

— Ահա՛ իմ հիշատակի անմոռացության նվերը ձեր ընկերներին: Դրանից մեկ օրինակ էլ օշականցի պարոն Ծալուն եմ տվել:

Այդ միջոցին ներս մտավ կառապանը և դարբաղցու բարբառով հայտնեց Նալբանդյանին, որ իրերը տեղավորված են կառքի մեջ և ինքը պատրաստ է ճանապարհ ընկնելու:

Այլևս անհնարին էր Նալբանդյանին հետ պահել ճանապարհից: Մենք ջերմությամբ ողջագուրվեցինք և բաժանվեցինք իրարից. նա Քանաքեռի ճանապարհով դեպի դեպի Տփլիս, իսկ ես՝ դեպի Կոնդ:

Հետագայում ես ինքս ինձ հաճախ եմ մեղադրել՝ թե ինչո՞ւ Նալբանդյանին գոնե մինչև Քանաքեռ ճանապարհ չգրի, չմտածեցի՝ թե ո՛վ մեռած, ո՛վ կենդանի, մեկ էլ իրար կտեսնե՞նք...:

